

ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

2013-
'14



PEACE DIALOGUE

«Խաղաղության
երկխոսություն»

Հասարակական
կազմակերպություն



TWITTER.COM/
PEACEDIALOGUE



FACEBOOK.COM/
PEACEDIALOGUE

Լուսանկարի հեղինակ՝ Արմինե Զաքարյան, © 2014, «Խաղաղության երկխոսություն» իկ:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՊԱԳԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Լուսանկարը՝ Արմինե Զաքարյանի,
© 2013, «Խաղաղության
երկխոսություն» հկ

ՀՈՒՅՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՎԱՏ

Սկսեցինք այն հույսով, որ կկարողանանք փոխել հայ հասարակության վերաբերմունքը կոնֆլիկտին առնչվող խնդիրների, մարդու իրավունքների և քննադատական մտածողության վերաբերյալ: Այս ամենն անհրաժեշտ է իրապես ժողովրդավար այնպիսի հասարակություն ունենալու համար, որն ընդունում է բազմազանության մշակույթն իր գաղափարներով հանդերձ, և որում ամեն ինչ արվում է խաղաղ ճանապարհով: Դրան հասնելու համար, սկսած 2009 թվականից, աշխատել ենք համայնքներում, տարբեր ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև աշխատանքային հանդիպումների, դասընթացների, հասարակական գործողությունների (ակցիաներ) և հետազոտությունների միջոցով, ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան երկրներում՝ Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Ռուսաստան և Ուկրաինա:

Ստեղծել ենք առցանց հարթակ, որի միջոցով մեր անմիջական ներկայությունն ենք ապահովում ինչպես հայ հասարակության մեջ, այնպես էլ ամբողջ աշխարհում: Հավատում ենք, որ մեր ներդրումն ենք ունենում Հայաստանում ավելի խաղաղ, քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող հասարակության ձևավորման գործընթացում. հասարակություն, որն ընդունում է բազմազանությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- **ԽՈՍՔ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԷԴԳԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՑ** ----- 4
- **ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ** ----- 5
- **ՄԵՐ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ** ----- 5
- **ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՄԵՋ ՀԱՄԱՐ ԱՅՆ
ՄԻՋԱՎԱՅՐԸ, ՈՐՈՒՄ ԱՊՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՄ ԵՆՔ** --- 5 - 7
- **2013-14ԹԹ. ՈՒՆԵՑԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՖԻԿ** -- 8
- **ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ, ԱՋԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂՆԵՐԸ** ----- 9
- **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ 2015-2016** ----- 11
- **2013 և 2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵՐ
ՈՒՆԵՑԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** ----- 12 - 23
- «Տեսնենք, ընտրենք, փոխենք...»* ----- 14
- «Անվտանգ զինվորներ՝ ապահով Հայաստանին»* ----- 16
- Օգնենք երիտասարդ կանանց խաղաղություն
կառուցել Կովկասում* ----- 18
- «Խաղաղասեր կանանց գործակալություն»* ----- 20
- Շարունակական բնույթ կրող խաղաղասիրական,
երիտասարդների ներգրավմամբ ծրագրեր
Վանաձորում և ոչ միայն* ----- 23
- **«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 2013-2014ԹԹ.** ----- 24 - 25



ԷԴԳԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՑ



Լուսանկարը՝ Մեթյու Մեդգինի,
© 2014 թ.՝ ԱՄՆ Պետքաղտուղարության
IVLP ծրագիր

2014 թվականը եզրափակելով՝
տեսնում ենք, որ իմ հույսն արդեն
վերածվել է հավատի, և որ մեր
նպատակները կարող են և պետք է
իրականություն դառնան:

առնչվող, խաղաղասեր և ժողովրդավար
հասարակության ձևավորման համար
անհրաժեշտ, ավելի լայն ու խորը
երկխոսություն:

Հատկանշական է, որ այս
փիլիսոփայությունը զուգորդվում է այլ
ժամանակակից գաղափարների հետ,
ինչպիսին են, օրինակ, Պաուլո Ֆրեյրեի
«Ճնշվածների թատրոն» և Ջոն Փոլ
Լիդերաքի «Կոնֆլիկտի տրանսֆորմացիայի
տեսություններ» աշխատություններում
շոշափվածները, նպաստում են ուսուցման և
որոշումների կայացման գործընթացներին,
գործընթացներ, որոնք այնքան կարևոր
դերակատարում ունեն մեր աշխատանքում
հաջողության հասնելու, ինչպես նաեւ,
ընդհանրապես, հասարակության
առաջընթացի համար:

2009 թվականին հուսով
էի, որ Հայաստանում
բաղադրական և
խաղաղասեր հասարակության ձևավորումը
խթանելու համար կարող է և պետք է
ավելին արվի: Ըստ մեր գործընկերների հետ
համատեղ մշակված մոտեցման՝ որոշեցինք
որդեգրել մանկավարժ և փիլիսոփա Պաուլո
Ֆրեյրեի ուսմունքն՝ արտահայտված նրա
«Ճնշվածների մանկավարժություն» գրքում:
Ինչպես Ֆրեյրեն, ես նույնպես հավատում
էի, որ քննադատական մտածողության
վրա հիմնված երկխոսությունն ավելի
գործունե մեթոդ է հասարակությանը
փոփոխությունների գործընթացում
ներգրավելու համար, ինչն անհրաժեշտ
խթան է Հայաստանում ազատության և
ժողովրդավարության բարգավաճման
համար: Այս փիլիսոփայությունը
մի մոտեցում է պահանջում, որն
անխուսափելիորեն տանում է
խաղաղությանն ու մարդու իրավունքներին

Ջանում ենք ավելի լավ հասկանալ, թե
ինչպես են Հայաստանում ընկալվում
խաղաղության և ժողովրդավարության
հասկացությունները՝ պատմության և
ներկայիս իրավիճակի, ինչպես նաև
ապագայի համատեքստում, որում ապրելու
ենք: Իրականացրել ենք սոցիոլոգիական
հարցում, որպեսզի ավելի խորությամբ
հասկանանք տվյալ համատեքստի
ազդեցությունը հասարակության վրա,
որից հետո կարող ենք ավելի մանրակրկիտ
իրականացնել մեր աշխատանքն ու օգնել
հասարակությանն ավելի լավ հասկանալ այն
լայն ընտրության հնարավորությունը, որն,
ըստ էության, ունենք:

Ցավոք սրտի, տեսնում ենք, որ մեր
հայրենակիցներից շատերը դեռ պետք է
ոչ միայն հուսան, այլ նաև հավատան, որ
փոփոխություններ հնարավոր են և կլինեն:
Դեռ շատ բան ունենք անելու: Անչափ
շնորհակալ եմ մեր աշխատանքի հանդեպ
հետաքրքրության և աջակցության համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«Խաղաղության երկխոսությունը» հիմնադրվել է 2008 թվականին: **Առաքելությունն** էր՝ միավորել փորձառու խաղաղասեր ակտիվիստներին Հայաստանից, Ռուսաստանից, Վրաստանից, Գերմանիայից և Նիդեռլանդներից և նրանց հետ միասին խթանել քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը կոնֆլիկտի խաղաղ կարգավորման գործընթացներին՝ հակամարտող հասարակությունների միջև փոխադարձ հարգանքի և բազմաշերտ երկխոսության միջոցով: Հավատում ենք,

որ երկխոսությունը միակ ճանապարհն է՝ մեր շահերը ներկայացնելու, սիմբիոտիկ համագործակցություն զարգացնելու և երկարատև խաղաղության հասնելու համար: Մեր երկարաժամկետ նպատակն է՝ խթանել փոխադարձ ըմբռնումն ու կանխարգելել նոր կոնֆլիկտները: Կազմակերպության **տեսլականն է**, որ այս բազմաշերտ երկխոսության արդյունքում հասարակության անդամների մեջ կձևավորվի այնպիսի գիտակցություն, ըստ որի՝ հենց մենք ենք պատասխանատու խաղաղության համար, որ լիովին իրավունք ունենք իշխանություններից խաղաղություն պահանջելու:



... «Խաղաղության երկխոսությունն» ազատ մտածելակերպի ջարդագույն է, որպեսզի բոլորն ազատ լինեն հասարակական կարծիքի ճնշումից: Այսօրեղ սկսում ես ազատ մտածել և, թվում է, զգում ես ազատության մթնոլորտը: Ես շատ բան եմ սովորել, այդ թվում՝ մեծ հարգանք մարդկային ձեռքբերումների հանդեպ: Փոփոխություններ ունեցա իմ անձնական կյանքում այն պահից, երբ դադարեցի հանդուրժել այն, ինչն իրականում ինձ դուր չի գալիս: Հիմա ինձ մոտ ալլընտրանքային ճաշակ է ձևավորվել և ազատվել եմ կոմպլեքսներից ու պատրանքներից», - ասում է «Խաղաղության երկխոսության» «Տեսնենք, ընտրենք, փոխենք...» ծրագրի կամավորներից մեկը՝ Անին:



ՄԵՐ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակությունները շատ դանդաղ են փոխվում, մշակույթները՝ շատ ավելի դանդաղ, այս երկուսի հանդեպ վերաբերմունքն՝ առավել եւս: Որեւէ ճգնաժամ ի զորու է արագացնել այս գործընթացները, սակայն ճգնաժամն իր հետ բերում է նաև հետևանքներ, որոնցից շատերն անկանխատեսելի ու անցանկալի են: «Խաղաղության երկխոսությունն» իր գործունեության մեջ խորապես գիտակցում է այս ամենն ու տվյալ իրականությունից ելնելով կազմակերպում այն:

Որպես հասարակական գործիչներ, ովքեր փաստագրում և աջակցում են նրանց, ովքեր բացահայտ կերպով քննադատում և քննարկում են Հայաստանում տիրող բարքերն ու

կառավարության գործունեությունը, մենք փոփոխությունները և դրանց հասնելու քայլերը դիտում ենք որպես հեռահար պլաններ:

Մեր նախաձեռնությունները պլանավորվում և իրականացվում են այս գիտակցությամբ և, հետևաբար, մշակվում են որպես բազմաշերտ ծրագրեր, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ՝ երկաժամկետ ակնկալիքներով: Կցանկանալինք, որպեսզի բոլորը տեղյակ լինեն «Խաղաղության երկխոսության» այս մոտեցմանն ու գնահատեն մեր աշխատանքը՝ ելնելով այն պատկերացումից, որ հանրային փոփոխությունները երկարաժամկետ հեռանկար են:

ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՄԵՉ ՀԱՄԱՐ ԱՅՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ, ՈՐՈՒՄ ԱՊՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՄ ԵՆՔ

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼ
ՏԵՂԱԿԱՆ, ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ**

Խորհրդային միության փլուզումից հետո նախկին խորհրդային երկրներից շատերն ամենատարբեր խնդիրներ, անգամ հակամարտություններ ժառանգեցին, ինչի արդյունքում կանգնած ենք տարբեր ներքին և արտաքին խնդիրների առջև: Հակամարտություն է Հայաստանի և Ադրբեջանի, Վրաստանի և Ռուսաստանի միջև, ներքին էթնիկ հակամարտություններ են շարունակվում ՌԴ տարածքում՝ Հյուսիս-Կովկասյան տարածաշրջանում, իսկ բոլորովին վերջերս թեժ հակամարտություն է սկսվել Ուկրաինայի և Ռուսաստանի միջև: Այս հակամարտությունները տեղի բնակիչների շրջանում անապահովության խոր զգացում են առաջացնում, ինչն, իր հերթին, առավելագույն է բարդացնում հակամարտությունների խաղաղ ճանապարհով կարգավորման գործընթացը:



ՃԱՆԱՉԵԼ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԶԱՅՆՆ ՈՒ ՆՐԱ ԴԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վախի, անվստահության և անտարբերության համատարած մթնոլորտը, ռազմականացման մշակույթի հետ միասին, խոչընդոտում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների գործունեությունն ու այնպիսի հասարակության ձևավորումը, որը կհարգեր ժողովրդավարությունն ու բազմազանությունը: Զարմանալի է, սակայն սա վերաբերում է նաև երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին, մի սերունդ, որը խորհրդային համակարգում չի մեծացել:



ԶԱՐԳԱՑՆԵԼ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ԿՕԳՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՐԲԵՐԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ

Պատմության՝ «հայրենասիրական» տեսանկյունից ներկայացումը, զոհի և հերոսի կերպարների ներմուծմամբ, բավական տարածված է և օգտագործվում է մարդու իրավունքների խախտումներն ու հասարակական գործընթացներում քաղաքացիական մասնակցության պակասն արդարացնելու նպատակով: Կոլեկտիվ ինքնության, ազգային, կրոնական, բարոյական եւ մշակութային նորմերն ու խիստ հավատարմությունն ավանդական գենդերային դերերին օգտագործվում են «զոհի», «հերոսի», «ներքին և արտաքին թշնամիների», «մենքի» և «մյուսների» վերաբերյալ միակողմանի պատմություն ստեղծելու, ինչպես նաև՝ բռնությունը լեգիտիմացնելու նպատակով:

ԿԱՐԵՎՈՐԵԼ ՈՉ ԲՈՒՆԻ ՊԱՅՔԱՐԸ

1994 թվականին զինադադարի պայմանագիր ստորագրվեց Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այնուամենայնիվ, մինչ այժմ հրադադարի ռեժիմի խախտման բազմաթիվ դեպքեր են գրանցվում: Այս իրավիճակը հանգեցրել է մեծ թվով զինվորական և քաղաքացիական կորուստների և երկու կողմերի միջև ատելության և թշնամանքի սրված մթնոլորտի ձևավորմանը: Հակամարտությունը շատերին հնարավորություն տվեց պահպանել իրենց քաղաքական իշխանությունն ու ուշադրություն շեղել երկու երկրներում էլ գոյություն ունեցող սցիալ-տնտեսական, քաղաքական և մարդու իրավունքների խախտման վերաբերյալ խնդիրներից: Այս ամենին պետք է հավելել նաև, որ հակամարտության պատճառով ռազմական մեքենային բյուջետային մեծ հատկացումները երկրի, իսկ քաղաքացիական հասարակության լուռ համաձայնությունը

դրան՝ այդ նույն հասարակության ռազմականացված լինելու ամենավառ ապացույցն է: Մտահոգիչ է, որ նման իրավիճակը, մեղմ ասած, բնավ չի նպաստում հակամարտության խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների խախտման խնդիրների լուծման գործընթացներին, հատկապես՝ այն խախտումների, որոնք, ցավոք սրտի, տեղի են ունենում զինված ուժերում:



ԽԹԱՆԵԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎՐԱ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Անհատի արժեքն ու նրա դերը հազվադեպ է առաջին պլան մղվում մեր հասարակությունում: Նման մոտեցումը գալիս է դեռևս ԽՍՀՄ ժամանակներից, երբ անհատները դիտվում էին զուտ որպես հասարակության բաղադրիչներ: Բազմակարծության և բազմազանության ցանկացած դրսևորում (այդ թվում՝ որևէ նոր գաղափար), փոփոխության հասնելու որևէ ձգտում կամ ավելի ակտիվ քաղաքացիական հասարակություն ունենալու ցանկություն, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ցանկացած գործողություն, չգիտես՝ ինչու, շատերի կողմից դիտարկվում է որպես ազգային արժեքներից օտարում և, որ դա, ամենայն հավանականությամբ, օտար ազդեցության հետևանք է ու պետք է անմիջապես ճնշվի: Անհատներն ընկալվում են որպես անդեմ արարածներ՝ օժտված ազգային շահերին ծառայելու պարտավորությամբ միայն, ունեն ընդամենը մի քանի անօտարելի իրավունքներ: Հատկանշական է, որ հասարակության վրա ազդեցություն ունեցող որոշումների կայացման գործընթացներին մասնակցության իրավունքը վերջիններիս շարքում լիովին բացակայում է:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԸ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ Է ԺՈՂՈՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԽԱՂԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Իշխանությունները չեն զլանում անընդհատ հիշեցնել բոլորին, որ հայրենիքի հանդեպ

նրանց անձնվեր սերն ու անվերապահ նվիրվածությունը մեծագույն արժեքներ են: Սա կատարվում է լրատվամիջոցների և, նույնիսկ, կրթական համակարգի միջոցով: Զարմանալի չէ, որ նման ոգով դաստիարակվածների համար անվիճելի է այն, որ պատերազմի մեջ գտնվող երկրում ցանկացած քննադատություն, առավել ես՝ քաղաքացիական անհնազանդության յուրաքանչյուր կոչ դիտվում է որպես դավաճանություն և հայրենիքը թշնամիներին վաճառելու փորձ: Ազգայնականությունը նույնացվում է հայրենասիրության հետ, իսկ քննադատական մտածելակերպը դիտվում է որպես խնդիր, ոչ մի կերպ՝ որպես լուծման միջոց, հատկապես այնպիսի լուծման, որը կարող էր խաղաղություն խթանել: Սա է պատճառը, որ այս ոլորտում աշխատող քիչ թվով հասարակության կազմակերպություններ, խմբեր կամ նախաձեռնություններ կան:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՐԿԱՎՈՐ Է ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԻԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՐԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ, ՄԱՆՎԱՆԴ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԳՐԵԹԵ ԻՄՊԱՌ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ Է ՆԿԱՏՎՈՒՄ:



Երկխոսության և քննադատական մտածելակերպի խթանումը մեր հասարակության մեջ և, ընդհանրապես, հակամարտության մեջ ներգրավված կողմերի մոտ անհրաժեշտ է և գնահատելի, եթե ցանկանում ենք շտկել ստեղծված իրավիճակը: Մենք տեսնում ենք, որ իսկապես անհրաժեշտ է ամրացնել համայնքների միջև կապերը, որպեսզի այս կերպ հասարակ մարդկանց մասնակցությունը կարողանանք ապահովել, մարդիկ՝ ում առօրյա կյանքը, մոտեցումները, իրավունքներն ու վարքը տուժում են ներկայիս համակարգի թուլության, մշակութային բռնության և անվերջ ձգվող հակամարտության պատճառով:

Գտնում ենք, որ հակամարտության առկայությունը սոցիալական խնդիրների համար պարզառաքանություն չի կարող լինել:

2013 ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԵՐ ՈՒՆԵՑԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՄԵՐ ԿԱՅՔՈՒՄ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ՇՈՒՐՋ 104
ՀԱՋԱՐ ԴԻՏՈՒՄ

6000 ՄԱՐԴ
ԱՅՑԵԼԵԼ Է
ԱՎԵԼԻ ՔԱՆ 65
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ-
ՆԵՐԻՆ

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
ԱՆԴԱՄՆԵՐՆ ԻՐԵՆՑ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՏԱՐՔԵՐ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ՝
ԻՆՉՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ,
ԱՅՆՊԵՍ ԷԼ՝
ԵՎՐՈՊԱՅՈՒՄ
ԵՎ ԱՄՆ-ՈՒՄ:

ՆԱԽԱՁԵՌՆԵՑԻՆՔ
«ԽԱՂԱՂԱՍԵՐ ԿԱՆԱՆՑ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ»
ԱՆՎԱՆՈՒՄՈՎ ՄԻ
ՆՈՐ, ՄԵԾ ԾՐԱԳԻՐ՝
ՄԻԱԺԱՄԱՆԱԿ
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ
«ԱՆՎՏԱՆԳ ԶԻՆՎՈՐՆԵՐ՝
ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»
ԵՎ «ՏԵՄՆԵՆՔ, ԸՆՏՐԵՆՔ,
ՓՈԽԵՆՔ...»
ԾՐԱԳՐԵՐԸ:

ՄԵՐ ԿՈՂՄԻՑ
ՍՏԵՂԾՎԱԾ ԵՎ
YOUTUBE ԿԱՅՔՈՒՄ
ՏԵՂԱԴՐՎԱԾ 30
ՀՈԼՈՎԱԿՆԵՐԻ,
ՖԻԼՄԵՐԻ ԵՎ
ՄՈՒԼՏՖԻԼՄԵՐԻ
21,807
ԴԻՏՈՒՄ:

26 ՀԱՍԱ-
ՐԱԿԱԿԱՆ
ԱԿՑԻԱ (ԲՈՂՈՔԻ
ԱԿՑԻԱՆԵՐ ԵՎ
ԱՅԼ ՑՈՒՅՑԵՐ):

ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ, ԱԶԱԿԻՑՆԵՐՆ ՌԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂՆԵՐԸ

GlobalGiving



PAX

PAX-ը հանդես է գալիս խաղաղության օգտին: Հակամարտության գոտիներում բնակվողների և Նիդեռլանդների քննադատական մտածելակերպ ունեցող քաղաքացիների հետ միասին նրանք ձգտում են ամենուրեք արժանապատիվ, ժողովրդավար և խաղաղասեր հասարակություն ձևավորել:



21 MARCH



Աշխարհը լի է խնդիրներով, իսկ Գլոբալ Գիվինգը լուծումներով: Լուծումներ, որոնք առաջ են քաշվում նորարարական ծրագրերի և կազմակերպությունների կողմից, որոնք զբաղվում են երեխաների կրթությամբ, կարիքավորներին օգնելու, տներ կառուցելու, կանանց և տղամարդկանց աշխատանքային հնտություններ տալու և հարյուրավոր այլ զարմանահրաշ աշխատանքներով:



Crisis Management Initiative

«Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն» ֆիննական ոչ կառավարական կազմակերպությունը գործունեություն է ծավալում հակամարտությունների կարգավորման եւ կայուն խաղաղության կառուցման ուղղությամբ: Կազմակերպությունն աջակցում է խաղաղասիրական գործընթացներին՝ խրախուսելով տեղական որոշում կայացնողներին կայունության կառուցման գործում, քաջակերպում հակամարտող կողմերին՝ երկխոսության ձգտելու գործում:

UNITED FOR INTERCULTURAL ACTION

Եվրոպական ցանց՝ ընդդեմ նացիոնալիզմի, ռասիզմի, ֆաշիզմի եւ ի աջակցություն միգրանտների ու փախստականների: Ցանցը կոորդինացնում, աջակցում եւ հզորացնում է իր մեջ ներառված 560 կազմակերպություններին՝ եվրոպական 46 երկրներից:



Institut für Auslandsbeziehungen

Մեր կազմակերպության «Տեսնենք, ընտրենք, փոխենք...» ծրագիրն իրականացվում է Գերմանիայի Դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) “zivik” ծրագրի աջակցությամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:



Auswärtiges Amt

OWEN

OWEN-ը՝ Գեղերային ժողովրդավարության և խաղաղության ակադեմիան, հիմնադրվել է 1992 թվականին: Կազմակերպությունն զբաղվում է քաղաքական կրթությամբ, մասնավորապես՝ դասընթացներ և միջոցառումներ կազմակերպում Գերմանիայում և արտերկրում՝ շեշտը դնելով հատկապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի վրա:



«Լա պալոմա դոքյումենթարիս» (La Paloma Documentaries)

La Paloma Documentaries-ն արտադրում է վավերագրական ֆիլմեր եւ մշակույթի, արդյունաբերության, հասարակության, մարդկային հարաբերությունների վերաբերյալ հաղորդումներ:




ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒՄԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՑԱՆՑ (UNOY)

Երիտասարդ խաղաղասերների միացյալ ցանցը (UNOY Peacebuilders) խաղաղասիրության ոլորտում ակտիվ երիտասարդ մարդկանց եւ երիտասարդական կազմակերպությունների համաշխարհային ցանց է: Այն իր մեջ ներառում է խաղաղասիրության եւ հակամարտությունների տրանսֆորմացիայի ոլորտում գործող 42 առաջատար կազմակերպություններ և 350 մասնաճյուղ: Ցանցն աջակցում է իր անդամներին երկու կարևոր ճանապարհով՝ կարողությունների զարգացում եւ շահերի պաշտպանություն ու քաղաքաշահներ:



2013 թվականի հուլիսի 5-9-ը
նիդերլանդական PAX կազմակերպությունն
Ստամբուլում հանդիպեց Հարավային
Կովկասի իր գործընկերների հետ:
Հանդիպման նպատակն էր՝ միացյալ
ուժերով մշակել և զարգացնել մի
նոր մեթոդոլոգիա համագործակցող
խաղաղասեր կազմակերպությունների
ռազմավարական պլանի համար:
Հանդիպման մասնակիցները
ներկայացնում էին Լեռնային Ղարաբաղի,

վրաց-օսեթական և վրաց-արխազական
հակամարտությունների մեջ ներգրավված
հասարակությունները: Նրանք
հնարավորություն ունեցան խորությամբ
և մանրակրկիտ ծնով ներկայացնել
և վերլուծել Հարավային Կովկասի
հակամարտությունների իրականությունը:
Քննարկեցին նաեւ տվյալ համատեքստում
իրենց աշխատանքի հետ կապված
հնարավորությունները, կարիքներն ու
պատկերացումները:



Լուսանկարը՝ Արմինե Զաքարյանի, © 2014,
«Խաղաղության երկխոսություն» հկ

Գործընկերների աջակցությամբ՝ մենք կաշխատենք Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված բոլոր հասարակությունների հետ և կստեղծենք քննադատական մտածողությամբ օժտված սոցիալական խմբեր, որոնք անմիջական ազդեցություն ունեն սոցիալ-քաղաքական գործընթացների վրա և նպաստում են դրական փոփոխություններին ու խաղաղության ձեռքբերմանը: Կաշխատենք նպաստել զանգվածային լրատվամիջոցների կողմից իրականացվող ռազմական պրոպագանդայի չեզոքացմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդ սերնդի ներկայացուցիչների իրազեկության բարձրացման վրա: Այս աշխատանքը կիրականացվի նաև նախկին Խորհրդային միության մի շարք երկրներում, որոնք այժմ հակամարտության մեջ են. Ադրբեյջան, Վրաստան, Ռուսաստան, Ուկրաինա:

Մեր նպատակներից է՝ իրազեկել զինվորների ազգականներին, որպեսզի նրանք կարողանան կապ հաստատել մեզ հետ՝ զինված ուժերում իրենց հարազատի հետ որեւէ միջադեպ լինելու դեպքում: Կօզենք զինվորներին ու նրանց ընտանիքներին դժվար պայմաններում համապատասխան քայլեր ձեռնարկել, ինչպես, օրինակ՝ զինված ուժերում մահացության կամ դժբախտ պատահարների դեպքում, զինակոչիկներին կիրազեկենք իրենց ունեցած իրավունքների մասին:

Տարածք կտրամադրենք կանանց՝ ապագա զինվորների մայրերի հետ իրենց փորձով կիսվելու համար և ամեն կերպ կաջակցենք նրանց, քանի որ կարելի էր ենք կանանց և երիտասարդների դերը խաղաղասիրության և հակամարտությունների կարգավորման գործընթացներում, խթանում այդ դերի բարձրացման ընթացքն՝ օգնելով

նրանց հմտություններ ձեռք բերել հակամարտությունների խաղաղ կարգավորմանը նպաստելու գործի վերաբերյալ:

Մեր աշխատանքի մեկ այլ նպատակն է՝ նպաստել կանանց մոտ բռնության և հակամարտությունների նկատմամբ իրենց անձնական մոտեցման ձևավորմանը: Մասնավորապես՝ մտադիր ենք Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված հասարակություններում բնակվող կանանց մոտ զարգացնել քննադատական մտածողություն սոցիալ-քաղաքական պրոցեսների նկատմամբ՝ ապահով տարածք տրամադրելով, որում հասարակության մեջ տաքուացված և ցավոտ խնդիրները կկարողանան բարձրաձայնել և անկաշկանդ քննարկել:

Կանենք հնարավորը, որպեսզի հակամարտության մեջ ներգրավված հասարակություններում ռազմատենչ մշակույթը փոխարինվի խաղաղության և բազմազանության մշակույթով: Կձգտենք հարգանք ձևավորել մարդու իրավունքների և ժողովրդավար արժեքների նկատմամբ՝ այս կերպ վիճարկելով Լեռնային Ղարաբաղում գոյություն ունեցող ռազմական կառավարման և դրա գրեթե «սրբացման» տարածված մոտեցումը:

Մենք կպահանջենք բռնության կանխարգելում և հակամարտության խաղաղ կարգավորում վերը նշված հասարակություններում, կձգտենք մարդկանց շրջանում խաղաղ կարգավորման պահանջարկ ձեւավորել: Կաշխատենք Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների հետ, որպեսզի իրենք ճանաչեն և գնահատեն իրենց դերը հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում, քաղաքական եւ սոցիալական կյանքում:

2012



Let's
change



2013

«ՏԵՍՆԵՆՔ,
ԸՆՏՐԵՆՔ,
ՓՈԽԵՆՔ...»


Էջ 14 - 15



Peace

Էջ 18 - 19

ՕԳՆԵՆՔ
ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԿԱՆԱՆՑ
ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ
ԿԱՌՈՒՅԵԼ
ԿՈՎԿԱՍՈՒՄ



էջ 16 - 17

«ԱՆՎՏԱՆԳ
ԶԻՆՎՈՐՆԵՐ՝
ԱՊԱՀՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

2015

2014



ԽԱՂԱՂԱՍԵՐ
ԿԱՆԱՆՑ
ԳՈՐԾԱԿԱ-
ԼՈՒԹՅՈՒՆ

էջ 20 - 21

2013 ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵՐ ՈՒՆԵՑԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱԿԻՐԾ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՏԵՍՆԵՆՔ, ԸՆՏՐԵՆՔ, ՓՈԽԵՆՔ...»

2011 թվականին «Խաղաղության երկխոսությունն» սկսեց իր եռամյա «Տեսնենք, ընտրենք, փոխենք...» ծրագիրը՝ Գերմանիայի դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) “zivik” ծրագրի աջակցությամբ, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:

Ծրագրի առաջին փուլում հիմնական նպատակն էր աջակցել Վանաձորում բնակվող երիտասարդ տղաներին և աղջիկներին՝ համայնքային մակարդակում քաղաքացիական և խաղաղասիրական ակտիվիզմի հիմնական դերակատարներ դառնալու գործում:

2012 թվականին ծրագիրն ընդլայնվեց, որպեսզի ավելի շատ երիտասարդներ ընդգրկվեն Հայաստանի այլ քաղաքներից և մարզերից եւս, այնուհետև՝ նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված հասարակություններից (Հայաստան, Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ): Ծրագիրը նպատակ ունի խրախուսել երիտասարդներին՝ օգտագործելու համար իրենց ստեղծագործական և ինտելեկտուալ պոտենցիալը հակամարտող կողմերի միջև փոխըմբռնման հասնելու համար, նպաստել խաղաղ ճանապարհով լուծումներին, աշխուժացնել իրենց համայնքներում բնակվող երիտասարդներին: «Տեսնենք, ընտրենք, փոխենք...» անվանումն արտահայտում է կազմակերպիչների մոտեցումը. տեսնել բոլոր այն խնդիրները, որոնք առկա են հասարակության մեջ, սակայն տարու են համարվում, զարգացնել քննադատական մտածելակերպ, հնարավորություն տալ մասնակիցներին այդ խնդիրների լուծման մեխանիզմներ գտնելու և խաղաղ ճանապարհով այդ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու համար:

Ծրագիրը հիմնված է Պաուլ Ֆրեյդի «Ազատագրման մանկավարժության» եւ Ավգուստո Բուլի «Ճնշվածների թատրոնի» մոտեցումների վրա, ըստ

որոնց երկխոսությունն ընկալվում է որպես միակ ուղին՝ մարդկանց մոտ սեփական իրավիճակը քննադատորեն վերլուծելու կարողություն ձեւավորելու, բռնությանը դիմակայելու եւ քննադատական մտածողության և քաղաքացիական մասնակցության միջոցով իրականությունը փոխելու ուղիներ փնտրելու եւ գտնելու համար:

Ծրագրի մեկնարկից մինչ այսօր **5 տարածաշրջանային** և ավելի քան **75 տեղական նախաձեռնություններ** են իրականացվել ծրագրի թիմի և մասնակիցների կողմից: Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված հասարակությունները ներկայացնող ավելի քան **160 երիտասարդ** մասնակցել է տարածաշրջանային դասընթացների: Ավելի քան **3000 երիտասարդ** ներգրավվել է դասընթացներին հաջորդող տեղական նախաձեռնություններում:

Շարունակական փոփոխությունը, որը նկատվեց «Տեսնենք, ընտրենք, փոխենք...» ծրագրի ընթացքում, այն է, որ այժմ ավելի մեծ թվով երիտասարդներ են զգում իրենց հասարակության և մշակույթի վերաբերյալ քննադատական քննարկումների և ազատ մտածելակերպի, այդ հասարակությունում դրական փոփոխությունների հասնելու գործում իրենց սեփական դերակատարության անհրաժեշտությունը: Այս երիտասարդներից շատերը ներգրավված են «Խաղաղության երկխոսության» կողմից կազմակերպվող շարունակական ծրագրերին, միջոցառումներին և հանդիպումներին:



Կոլեկտիվ հիշողությունը մարդկանց
պատկանելության զգացում է պալիս:
Պատմությունն օգնում է բացատրել աշխարհը:
Պատմության հանդեպ միևնույն տեսակետն
ունենալը կարող է մարդկանց մղել քայլի,
որը կարող է փոխել աշխարհը: Սրանք
այն հիմնական գաղափարներն էին, որ
կազմակերպիչները փորձել են փոխանցել
2013 թվականի նոյեմբերի 14-24-ը Թբիլիսիում
կազմակերպված «Պատմության թատրոն»
դասընթացի մասնակիցներին:

Օգտագործելով թատրոնն ու թատերական
հնարքները՝ որպես Լեոնային Ղարաբաղի
հակամարտության մեջ ներգրավված
հասարակությունները ներկայացնող
երկրասարդների համար անվտանգ տարածք
ստեղծելու միջոց, դասընթացավարներ
Հարալդ Հանը և Մարինա Գրասսեն
օգնեցին մասնակիցներին տեսնել և ճանաչել
իրենց դերը պատմության կերպման
գործընթացներում:

Դասընթացը կազմակերպվել է Խաղաղության
երկխոսության «Տեսնենք, ընտրենք,
փոխենք...» ծրագրի շրջանակներում
Գերմանիայի դաշնության արտաքին
մշակութային կապերի ինստիտուտի (ifa)
“zivik” ծրագրի աջակցությամբ, Գերմանիայի
արտաքին գործերի նախարարության
միջոցներով:

«ԱՆՎՏԱՆԳ ԶԻՆՎՈՐՆԵՐ՝ ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

«Խաղաղության երկխոսությունը», նիդեռլանդական PAX կազմակերպության աջակցությամբ, իրականացնում է իր «Անվտանգ զինվորներ՝ ապահով Հայաստանին» երկամյա ծրագիրը: Այս ծրագրի նպատակն է կանխարգելել ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտման դեպքերը և բարձրացնել ոչ միայն Հայաստանի, այլ նաև այն պաշտպանող զինվորների անվտանգությունը:



«Ծրագիրը եզակի է այն առումով, որ այն թույլ չի տալիս մեզ, որպես հասարակություն, մոռանալ այն մարդկանց մահը, ում համար մենք պատասխանատվություն ենք կրում: Սպանությունները բանական, որոնք մեր պետության քայքայիչ գործոններից են, դեռևս շարունակվում են: Դրանց պատճառները չեն վերացվում և չենք կարող խոսել խաղաղության մասին՝ քանի դեռ յուրաքանչյուր զինվորի մահվան պատճառները չեն բացահայտվել և հետազոտվել, իսկ պետությունն այդ ամենի համար պատասխանատվություն չի կրում», - ասում է «Անվտանգ զինվորներ՝ ապահով Հայաստանին» ծրագրի մեջ ընդգրկված Լալա Ասիկյանը:



«Խաղաղության երկխոսությունը» մտադիր է բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը մարդու իրավունքների բնագավառում ՀՀ ԶՈՒ-ում տիրող մտահոգիչ իրավիճակի վերաբերյալ՝ խնդրի լուծման ուղղությամբ հասարակական պահանջարկ ձևավորելու նպատակով, մոբիլիզացնել եւ ներգրավել տեղական, ազգային եւ միջազգային դերակատարների, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ իրավիճակի վրա: Ծրագրի բաղադրիչներից մեկը զորակոչային տարիքի երիտասարդների իրազեկումն է զինված ուժերում մարդու իրավունքների իրավիճակի, զինվորականների ունեցած իրավունքների վերաբերյալ: Ծրագրի մեկ այլ բաղադրիչ ենթադրում է ստեղծել տվյալների բազա պարունակող կայքէջ, որում հավաքագրված կլինեն տվյալներ 1994 թվականին զինադադարի կնքման պահից մինչ այսօր ՀՀ ԶՈՒ-ում մահացության վերաբերյալ:

Տվյալների բազան նպատակ ունի հավաքագրել տեղեկություններ զինված ուժերում գրանցված մահվան ելքով

դեպքերից յուրաքանչյուրի, ինչպես նաև մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ, որպեսզի այս խնդիրների լուծումը Հայաստանի իշխանություններից պահանջելու համար անհրաժեշտ հասարակական պահանջարկ ձևավորվի:

Հայերեն և անգլերեն լեզուներով կարգավորվող www.safesoldiers.am կայքը մեկնարկել է 2013 թվականի նոյեմբերին: Կայքը և տվյալների բազան պարբերաբար լրացվում են լրատվամիջոցներից և անհատներից ստացված տեղեկատվությամբ:

Տեղեկատվական բազայում այժմ գրանցված է զինված ուժերում [մահվան ելքով 650-ից ավելի դեպք](#): Մինչ այժմ գրանցվել է կայքի ավելի քան 45 հազար դիտում: Միջազգային և տեղական կազմակերպությունները ցուցաբերել են իրական և կայուն հետաքրքրվածություն ներկայացված նյութերի հանդեպ և շարունակում են կապ պահպանել մեզ հետ:

2014 թվականին մոտ [170 մարդ](#) է մասնակցել «Արդարադատարանի»՝ կոնֆլիկտի



Լուսանկարը՝ Արմինե Զաքարյանի,
© 2014, «Խաղաղության երկխոսություն» հկ

«Արդարադատության» անունը կրող խաղ-քննարկումը, որն իրականացվեց Կոնֆլիկտի մոդելավորման մեթոդոլոգիան օգտագործելով, սկզբում ներկայացվեց Վանաձորի քաղաքացիներին, այնուհետև այն անցկացվեց նաև Հայաստանի տարբեր քաղաքներում: Բեմականացված դատական քննության ընթացքում հանդիսատեսն ինքն ստանձնեց դատական նիստում ներգրավված կողմերի դերերն ու դատաքննության ընթացքում ձգվում էր հասնել արդարության ըստ իր ստանձնած կերպարի ընկալման:

մոդելավորման 6 խաղ-քննարկմանը:

«Խաղաղության երկխոսություն» կազմակերպության «Ճնշվածների թատրոն» խմբակի կողմից թվով հինգ ներկայացում է կազմակերպվել Հայաստանի ավագ դպրոցներում: Այս տարվա սկզբից իրականացվել է տասնյակ միջոցառումներ և քննարկումներ Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի ավագ դպրոցների աշակերտների ու երիտասարդների հետ՝ ՀՀ զինված ուժերում արձանագրվող մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ: Ավելի քան 450 երիտասարդ մասնակցել է կազմակերպված տարբեր միջոցառումների, որոնք նպատակ ունեն իրազեկել զինակոչիկներին՝ զինված ուժերում ծառայելու ընթացքում իրենց ունենալիք իրավունքների վերաբերյալ:

2014 թվականի ապրիլի 29-30-ը Երեւանում տեղի ունեցավ «Մարդու իրավունքները զինված ուժերում. փորձի համակարգում» աշխատանքային հանդիպումը, որի նպատակը Հայաստանի և Ռուսաստանի հասարակական խմբերի, կազմակերպությունների, ակտիվիստների եւ զոհված զինծառայողների ընտանիքների ներկայացուցիչների համար միասնական հարթակի ստեղծումն էր՝ ուղղված

ինքնավերլուծությանը, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ սեփական գործունեության կատարելագործմանը:

Աշխատանքները շարունակվում են, և «Խաղաղության երկխոսությունը» փորձում է ստիպել իշխանություններին հաշվի նստել այն խնդիրների հետ, որոնք բացահայտվում են մեր կամ մեր փորձագետների կողմից:

Հետեւում ենք դատական գործընթացներին, որոնք առնչվում են զինված ուժերում գրանցված մահվան դեպքերին: Կազմակերպության փորձագետը մի շարք գործերով հանդես է գալիս որպես տուժածների ընտանիքների ներկայացուցիչ. շարունակում ենք հետամուտ լինել արդարության և պատասխանատվության հասնելու գործին: Կապ ենք հաստատել մի քանի ընտանիքների հետ և փորձում ենք օգնել նրանց բացահայտել իրենց զավակների մահվան հետ կապված մանրամասները: Առաջ ենք քաշել նաեւ զինծառայողների ապօրինի ազատազրկման հարցը և այն, թե ինչ հիմքերով, որքան էլ ինչ պայմաններում են պահվում այս կամ այն գործով մեղադրվող կամ որպես վկա ներգրավվող զինծառայողները:



Լուսանկարը՝ Արմինե Զաքարյանի,
© 2013, «Խաղաղության երկխոսություն» հկ

ՕԳՆԵՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Տինանսական միջոցների սղության պատճառով դասընթացներում ընդգրկվել են երիտասարդ կանայք և աղջիկներ միայն Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերից:

2014 թ. օգոստոսի 15-17-ն այս երիտասարդ կանայք մասնակցեցին եռօրյա դասընթացի, որի ընթացքում հնարավորություն ստացան բարելավել իրենց գիտելիքները մարդու իրավունքների, ժողովրդավրության և կոնֆլիկտների խաղաղ կարգավորման թեմաների շուրջ:

«Բռնությունն ունի տարբեր դրսևորումներ» խորագիրը կրող դասընթացը ֆինանսավորվել է Գլոբալ Գիվինգ առցանց ֆոնդահայթայթման կայքէջի միջոցներով: Դասընթացի նպատակն էր հզորացնել Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը ներկայացնող երիտասարդ կանանց, որպեսզի նրանք գիտակցեն հակամարտության ունեցած մշակութային ազդեցությունը ներկա սերնդի վրա և հնարավորություն ունենան ավելի կայացած խաղաղասեր ակտիվիստներ դառնալու իրենց իսկ հասարակություններում:

Բացի այդ՝ նրանք, սեփական փորձի վրա հիմնվելով, ուսումնասիրեցին տարբեր հասարակական երևույթների միջև եղած փոխադարձ կապերը, այդ երևույթների ազդեցությունը տարբեր քաղաքական և քաղաքացիական գործընթացների վրա:

Ծանոթացան «կոնֆլիկտ» եւ «բռնություն» հասկացությունների հետ, փորձեցին ուսումնասիրել ժողովրդավարության դերը կոնֆլիկտների խաղաղ կարգավորման գործընթացներում:



«Ես իրականությունից հեռու շատ բաներ էի պատկերացնում: Շատ հեշտ էր պատկերացնել, բայց այդ ամենը սուբյեկտիվ է: Երբ ասում են, որ իսկական հայ չես, եթե քո մոտ ցանկություն չի առաջանում որևէ թուրք կամ ադրբեջանցի սպանել, երբեմն ես սկսում եմ մտածել. միգուցե ես իսկապես լավ հայ չեմ: Ահա թե ինչու էի ես ադրբեջանցիներին այդպես (խաղաղասեր) պատկերացնում եւ ներկայացնում այս խաղի ընթացքում: Կարծում եմ՝ հայրենասիրությունն ավելության որոշակի փարթ է պարունակում իր մեջ...», - ասում է «Բռնությունն ունի փարբեր դրսևորումներ » դասընթացի մասնակիցներից մեկը:



Մասնակիցները խոսեցին իրենց մշակութային ինքնության մասին, այն ամենի մասին, ինչն ազդեցություն ունի իրենց վրա: Ուսումնասիրեցին կարիքներն ու վախերը, որոնք կանգնած են հակամարտության մեջ ներգրավված կողմերի վարքագծի ետևում:

Բացի մասնակիցներին տեսական գիտելիքներ և գործիքներ տրամադրելուց՝ կազմակերպիչները նպատակ ունեին մի այնպիսի հարթակ ստեղծելու, որում մասնակիցները կկարողանան սովորել միմյանցից՝ փորձի փոխանակման, քաղված դասերը կիսվելու միջոցով:

Այս ծրագիրն առաջին քայլն եղավ ավելի երկարաժամկետ, տարբեր մշակույթներ և երկրներ ընդգրկող ծրագրի համար, որը կոչվում է «Խաղաղասեր կանանց գործակալություն»:

Ծրագիրը նաեւ պատկերացում տվեց, թե այս թեմայի հետ կապված ինչպիսի մոտեցում պետք է ընտրել և, որ ամենակարևորն է, ցույց տվեց, որ Կովկասի կանայք պատրաստ և ի վիճակի են քննարկել բարդ և զգայուն թեմաներ՝ տարածաշրջանի համար երկարատև և թափանցիկ խաղաղասիրական գործընթաց ապահովելու նպատակի համար:



ԽԱՂԱՂԱՍԵՐ ԿԱՆԱՆՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

2014 թվականի երկրորդ կեսին «Խաղաղության երկխոսությունն» իր գործընկերոջ՝ ֆիննական «Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն» (CMI) կազմակերպության աջակցությամբ, նախաձեռնեց «Օգնենք երիտասարդ կանանց՝ խաղաղություն կառուցել Կովկասում» ծրագիրը: Սրանով մեկնարկեցին միացյալ ուժերով կազմակերպվող «Խաղաղասեր կանանց գործակալություն» ծրագրի մշակման և նախապատրաստական աշխատանքները: Ծրագիրը հիմնված է CMI-ի՝ կոնֆլիկտի կանխարգելման և բռնության հետևանքների հետ աշխատանքի ուղղությամբ տարբեր շահառուների միջև երկխոսություն մշակելու և իրականացնելու երկար տարիների փորձի վրա:

Լ պատակն է՝ ակտիվացնել և խաղաղասիրական ու քաղաքացիական գործընթացների մեջ ներգրավել Կովկասի հակամարտության գոտում բնակվող կանանց՝ ակտիվ կանանց հիմնական խումբ ստեղծելով, բազմաշերտ երկխոսություն ձևավորելով հակամարտությունից տուժած կանանց, քաղաքացիական հասարակության և որոշումներ կայացնողների միջև: Ծրագրի նպատակն է՝ ապահով տարածք ստեղծել մասնակիցների հզորանալու և գաղափարների փոխանակման համար:

Կարևոր է ընդլայնել, հզորացնել և բարելավել տարածաշրջանում գործող կին դերակատարների աշխատանքի արդյունավետությունը, որպեսզի նրանք դառնան փոփոխությունների ակտիվ դերակատարներ (դրական փոփոխություններին ամեն կերպ ընդդիմանալու փոխարեն), ազդեցություն ունենան իրենց համայնքների վրա: Այս գործընթացում կձգտենք մասնակիցների մոտ քննադատական մոտեցումներ ձեռավորել պատմության նկատմամբ եւ ընդարձակել նրանց պատկերացումներն այն մասին, որ միեւնոյն պատմական իրադարձության մասին տարբեր ընկալումներ կարող են լինել, այն մասին, թե այդ տարատեսակ մեկնաբանություններն ինչպեսի ազդեցություն կարող են ունենալ հակամարտության կամ դրա կարգավորման վրա, տարածաշրջանում ընթացող խաղաղասիրական գործընթացների վրա նաեւ: Ծրագիրը կարևորում է հավելյալ

Լուսանկարը՝ Արմինե Զաքարյանի,
© 2014, «Խաղաղության երկխոսություն» իկ



կապերի ստեղծումը որոշում կայացնողների եւ հիմնական դերակատար ակտիվ կին գործիչների միջև՝ ներգրավելով նրանց ոչ պաշտոնական երկխոսության մեջ տարածաշրջանում:

Ծրագրի էությունն է՝ ներառել ավելի մեծ թվով կանանց, որոնց շատ հաճախ համարում են փոփոխություններին ընդդիմացողներ: Սրանք այն կանայք են, ովքեր շատ հաճախ դուրս են մնում քաղաքացիական հասարակությունից և համայնքային մակարդակում իրականացվող գործընթացներից: Ծրագիրը մշակվել է՝ հիմնվելով CMI-ի այն գաղափարախոսության վրա, ըստ որի անհրաժեշտ է ներգրավել և ակտիվացնել կանանց, քանի որ նրանք են, հիմնականում, դրական հասարակական փոփոխություններ բերողները, իրենց համայնքներում ու հասարակություններում քաղաքական մեծ ազդեցություն ունեցողները: Ծրագրում մեծ ուշադրություն է հատկացվում այն բանին, որպեսզի մասնակից կանայք իրենք հասարակության հետ աշխատեն տվյալ խնդիրների ուղղությամբ, սակայն ոչ որպես վերջնական արդյունք, այլ որպես կոնկրետ քայլ տարածաշրջանում խաղաղասիրական գործընթացներում՝ այն հավատով, որ այսպիսով ծրագիրը հետագայում կընդլայնվի և կշարունակվի: Ծրագրի տրամաբանությունը հիմնված է նաեւ համատեղ աշխատանքի մեթոդների յուրահատուկ համադրության վրա՝ ուղղված

նորարարական երկխոսության գործընթացի ստեղծմանը, հիմնված «Խաղաղության երկխոսության» մեկուսացված խմբերի համար ներառական գործընթացների զարգացման փորձի վրա:

Հայաստանի տարբեր մարզերում նախապատրաստական չորս հանդիպում է կազմակերպվել 2014 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Սրա նպատակն էր՝ չափել ակնկալվող ներգրավվածության մակարդակը: Հանդիպումների արդյունքները ցույց տվեցին, որ տարբեր համայնքներում ակտիվ կանայք հետաքրքրված են ծրագրով, պատրաստ են աջակցել, կներգրավվեն իրենց հետաքրքրությունների հետ այս կամ այն կերպ առնչվող նախաձեռնություններում եւ կներգրավվեն այլոց էլ: Նրանք պատրաստակամ էին և կարողանում էին քննադատորեն վերլուծել իրենց անձնական իրավիճակը, առաջարկեցին անգամ քննարկել այնպիսի թեմաներ, որոնք շատերի կարծիքով տաբուացված են: Պարզվեց, որ հակառակ հասարակության մեջ արմատացած կարծրատիպի, ըստ որի անհնար կամ գրեթե անհնար է դրական փոփոխությունների հասնել, այս կանայք ոչ միայն հավատում են, այլ նաև պատրաստ են քայլեր ձեռնարկել փոփոխության հասնելու համար՝ նույնիսկ անձնական զոհողությունների գնով: Ծրագիրն առաջ կընթանա ըստ այն հետաքրքրությունների և խնդիրների, որոնք քննարկվեցին այս հանդիպումների ընթացքում:



ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՎԱՆԱԶՈՐՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Միշտ կարծել ենք, որ ավելի զարգացած քաղաքացիություն ունենալու համար անհրաժեշտ է քայլերի, հակամարտությունների խաղաղ կարգավորման, ազատ, բազմազան և ժողովրդավար հասարակության մեջ մարդու իրավունքների դերի վերաբերյալ իրազեկություն փարածելը, մարդկանց իրազեկելն այս խնդիրների շուրջ խոսելու համար ապահով և հարմարավետ փարածքի կարիք ունի: Ընդ որում, այսօրեղ նրանք պետք է հնարավորություն ունենան շփվելու նաեւ ավելի փորձառու եւ վերոնշյալի մասին առավել խոր պատկերացում ունեցողների հետ:


Այս նպատակով, որոշվեց բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են ավելին իմանալու և ավելի խորությամբ այս խնդիրներն ուսումնասիրելու, հնարավորություն տալ ապահով և բաց տարածք ունենալու այդ ամենի համար:

Ահա թե ինչու է մեր հաստատությունը բաց բոլորի համար: Հրավիրում ենք բոլորին գալ և շփվել մեր անձնակազմի և ընկերների հետ այս բաց և ապահով միջավայրում: Տրամադրում ենք ինտերնետային կապ և միմյանց հանդիպելու, կարդալու և հանգստանալու համար հարմարավետ միջավայր:

Ռեսուրսներ եւ հնարավորություն ենք տալիս նաեւ այնպիսի ծրագրերի և գաղափարների վրա աշխատելու, որոնք համահունչ են մեր առաքելությանն ու հետաքրքրություններին:

Բացի այն, որ կազմակերպությունը երիտասարդների համար ինքնարտահայտման տարածք, հարթակ է տրամադրել ամենօրյա այնպիսի խնդիրների ուղղությամբ աշխատելու համար, ինչպիսիք են, օրինակ, վատթար վիճակում գտնող

Լուսանկարը՝ Արմինե
Զաքարյանի,
© 2014, «Խաղաղության
երկխոսություն» հկ



քաղաքային տրանսպորտը, վերջերս այդ երիտասարդների հետ համատեղ նաեւ պատրաստել ենք մի ֆիլմ, որն ավելի լայն և խորը պատկերացում է տալիս Լեռնային Ղարաբաղի հակամարտության և այն մասին, թե ինչպես է հակամարտությունն ազդել ֆիլմի երեք հերոսների կյանքի վրա:

Շարունակում ենք նաեւ մեր ծրագրերից մեկը՝ Սինեմոբիլիզացիան, որի ընթացքում սոցիալական, քաղաքական և քաղաքացիական իրավունքի խնդիրներ վերհանող տարբեր ֆիլմեր են ցուցադրվում, որոնք այնուհետեւ դառնում են քննարկման թեմաներ:

2015 թվականից սկսած մեկ այլ նոր ծրագիր է մեկնարկում, որը կոչվում է «Քննադատական մտածելակերպի զարգացմանն ուղղված քննարկումներ անգլերեն լեզվով»: Սա իրազեկման աշխատանքների մեկ այլ բաղադրիչն է: Երկխոսությունը, որը փորձում ենք խթանել քննադատական մտածելակերպ արթնացնելով հայ հասարակության մեջ՝ շարունակում է աճել և ընդլայնվել:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԵՈՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 2013-2014 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Տեսնենք, ընտրենք, փոխենք...»
ծրագիրը ֆինանսավորվել է Գերմանիայի դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) “zivik” ծրագրի կողմից՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով: 2013 թվականին ծրագրի ընդհանուր դրամաշնորհը կազմել է 87 հազար 950.32 €:

«Խաղաղասեր կանանց գործակալությունը»
ֆինանսավորվում է CMI-ի կողմից՝ տրամադրված դրամաշնորհի (9 հազար 271.16 €) միջոցով:

2015-2016
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ
ԱՎԵԿԱՎԵԼԻՔ
ՄՈՒՏՔԵՐԸ՝ 205
ՀԱՋԱՐ ԵՎՐՈ

ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄՈՒՏՔԵՐԸ
2013-2014
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ՝
159 ՀԱՋԱՐ
336.90 ԵՎՐՈ


«Բռնությունն ունի տարբեր դրսևորումներ» դասընթացը ֆինանսավորվել է Գլոբալ Գիվինգ առցանց հարթակի միջոցով՝ ստացված նվիրատվությունների միջոցով: Տարբեր անհատների կողմից նվիրաբերվել է 1 հազար 222.42 € գումար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄՈՒՏՔԵՐԸ
2011-2012
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ՝
136 ՀԱՋԱՐ
096,42 ԵՎՐՈ


«Անվտանգ զինվորներ՝ ապահով Հայաստանին» ծրագիրը ֆինանսավորվել է PAX-ի կողմից՝ 2013-2014 թվականների համար տրամադրված դրամաշնորհի միջոցով (54 հազար 126.00 €):



«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ» ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ



«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ» ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐԸ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ





ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԷԴԳԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԴԻԳՈՅԵԻ
ՀԱՄԼԵՏ ԱԶԱՐՅԱՆ
ԴԱՆԱ ԶԻՐՈՇ
ՕԹԱՐ ԿԱՐԱԼԱՇՎԻԼԻ

ԱՆՁՆԱԿԱԶՄ՝

ՎԱՀԱԳՆ ԱՆՏՈՆՅԱՆ
ԱՆԻ ԴԵՐՁՅԱՆ
ԿԱՌԱ ՂԱԶԱՐՅԱՆ
ԷԴԳԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԱՐՄԵՆ ՊԱՊՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ՍԵՐԳՈՅԱՆ
ԱՆՆԱ ԶԱՔԱՐՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ

Շատ ու շատ մարդիկ մեզ օգնել են
անհատական ծրագրերի շրջանակներում և
կաևորագույն մասն են կազմում այն ամենի, ինչ
այսօր իրենից ներկայացնում է «Իսաղաղության
երկխոսությունը»: Այս մարդկանցից շատերն
աշխատել են որպես պայմանագրային
աշխատողներ, իսկ մյուսները այս գործին
նվիրվել են կամավորական հիմունքներով:

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝

ՍԹԻՎԵՆ Մ. ԳՐԻՆԲԵՐԳ
ԱՐՄԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ
ԷԴԳԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ԱՆՏՈՆՅԱՆ
ԱՆԻ ԴԵՐՁՅԱՆ

ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ՝

ՀԱՍՑԵ՝ ՄՅԱՄՆԻԿՅԱՆ 12, 40 ԲՆ.
2002, ՎԱՆԱԶՈՐ, ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԵՌ. +374 (322) 21340
ԲԶԶ. +374 (55) 820632, (93) 820 632



ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

<http://www.peacedialogue.am>

<http://www.safesoldiers.am>



twitter.com/peacedialogue



facebook.com/PeaceDialogue



youtube.com/user/PeaceDialogueNGO

ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ



PEACE DIALOGUE

© 2014, «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ